ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ

ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ»

ՍՈՑԻԱԼ-ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿՐԹԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ

ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ

ԱՇԽԱՏԱՆՔ

Խումբ՝ Անգլերեն

Թեմա՝ Մեդիակրթությունը որպես թվային և մեդիա կարողակաության զարգացման արդյունավետ միջոց անգլերեն լեզվի ուսուցման գործընթացում 8-րդ դասարանում

Հետազոտող՝ Հռիփսիմե Մարգարյան

ՀՀ Կոտայքի մարզի ք. Աբովյանի թիվ 7 հիմնական դպրոցի անգլերենի ուսուցչուհի

Ղեկավար՝ Հերմինե Աբրահամյան

Աբովյան 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ…… 3

ԳՐԱԿԱ ՆՈՒԹՅԱՆ ԱԿՆԱՐԿ…… 5

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴՆԵՐ…….. 11

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ …….. 15

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ……. 16

ՀԱՎԵԼՎԱԾ 1…….. 17

ՀԱՎԵԼՎԱԾ 2…….. 18

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Տեղեկատվական ներկայիս ժամանակաշրջանում անձի դաստիարակության, մտածողության զարգացման, աշխարհընկալման ձևավորման ամենահզոր միջոցներից մեկը մեդիան է: Մեդիան զանգվածային հաղորդակցման միջոցներն են: Մեդիակրթության հիմնական նպատակը թվային աշխարհում և

տեղեկատվական նոր պայմաններում անձի մեդիագրականություն և մշակույթի ձևավորումն է: Ուստի 21-րդ դարում մեդիակրթությունն անհրաժեշտ է հասարակության յուրաքանչյուր անդամի, քանի որ տեղեկատվական այս դարաշրջանում մարդիկ ուղղակի կամ անուղղակի կերպով տեղեկույթի սպառողներ են: Հաշվի առնելով զանգվածային մեդիայի դերը՝ հետազոտողները և հասարակությունը կրթական բոլոր աստիճաններում ընդգծում են մեդիակրթության անհրաժեշտությունը: Մեդիան նույնիսկ կարող է դառնալ կրթության հուսալի դաշնակից հանդես գալով իբրև արտաքին աշխարհի հետ բացվելու աղբյուր: Ժամանակակից դպրոցը պետք է այսուհետ սովորեցնի աշակերտներին ինչպես դառնալ մեդիայի ակտիվ ու տեղեկացված օգտագործողներ կրթության ոլորտում: Անգլերեն լեզվի դասավանդմամբ մեթոդաբանության զարգացման միտումներն էլ չափազանց արագ են, և մեդիակրթությունը նորանոր պահանջներ է ձևավորում նաև մեդիագրագետ անհատի թղթապանակին՝ այն անընդհատ համալրման, նոր արդյունավետ գործիքների մշակման, ներդրման և կիրառման առումով: Ժամանակակից կրթական պահանջները ենթադրում են, որ անգլերեն լեզվի դասավանդումը 8-րդ դասարանում չպետք է սահմանափակվի լեզվական այնպիսի հմտությունների ինքնանպատակ դասավանդմամբ, ինչպիսիք են հնչյունաբանությունն ու ձևաբանությունը, բառապաշարն ու շարահյուսությունը: Անգլերեն լեզվի դասավանդումը 8-րդ դասարանում պետք է նպատակաուղղված լինի նաև Հանրակրթության պետական չափորոշչով սահմանված հետևյալ կարողունակության ձևավորմանը՝ տեղեկատվական հոսքի մեջ կողմնորոշվելու հմտություն և մեդիագրագիտություն, վերլուծական, քննադատական և ստեղծագործական մտածողություն: Այս նկատառումներից ելնելով անգլերեն լեզվի ուսուցիչը ունի շատ կարևոր խնդիր՝ խթանել անգլերեն լեզվի հանդեպ 8-րդ դասարանի աշակերտների հետաքրքրությունը, զարգացնելով թվային և մեդիա կարողունակությունը, ստեղծել այնպիսի իրավիճակ դասի ժամանակ, որում աշակերտները հետաքրքրություն և ստեղծագործություն ցուցաբերեն: Հենց այս դիտարկմամբ է պայմանավորված տվյալ հետազոտական աշխատանքի արդիականությունը, որի նպատակն է՝ 1 զարգացնել մեդիակրթություն որպես թվային և մեդիա կարողունակության տարր անգլերեն լեզվի դասապրոցեսում 8-րդ դասարանում:

Հետազոտության խնդիրներն են՝

1. Ուսումնասիրել թեմայի վերաբերյալ առկա հայրենական և արտասահմանյան գիտական գրականությունը, ուսումնական ծրագրերն ու դասագրքերը
2. Իրականացնել սոցհարցում ուսուցիչների ու աշակերտների շրջանում և ստացված արդյունքներով հիմնավորել մեդիակրթության՝ որպես մեդիամշակույթի ձևավորման արդյունավետություն:

Հետազոտական աշխատանքի շրջանակներում կիրառվել են հետևյալ մեթոդները՝

- հարցում
- զրույց
- հետազոտությունների արդյունքների վերլուծման մեթոդներ

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԿՆԱՐԿ

Մեդիակրթությունը՝ որպես թվային և մեդիա կարողունակության զարգացման արդյունավետ միջոց անգլերեն լեզվի 8-րդ դասարանի ուսուցման գործընթացում:

Կրթությունն այսօր նախկինից տարբերվող չափանիշներ ունի: Հիմա ամեն տեղեկություն հնարավոր է խիստ կարճ ժամկետներում գտնել, օգտագործել, հետևաբար հիշողությամբ ամեն ինչ պահել չարժե և հնարավոր էլ չէ: Այսօր կրթված մարդը պիտի կարողանա տիրապետել հաղորդակցման հմտություններին, կարողանա հասկանալ իրեն ուղղված ասելիքը և նույնիսկ նպատակային արտահայտվել: Արևմտյան ժամանակակից մանկավարժները (Մաեստերման, Բրուներ, Թեյլի, Հարթ, Հեյլի, Կոսիդայն) մի շարք տեղեկություններ են մշակել ու փորձում են գործնականում կիրառել դրանք հենց հաղորդակցվող հասարակություն դաստիարակելու համար, Արևելյան Եվրոպան ու Ռուսաստանն էլ հետ չեն մնում: Արդի ժամանակներում լայն տարածում է ստացել մանկավարժության համեմատաբար նոր՝ «մեդիակրթություն» կամ «մեդիամանկավարժություն» կոչվող ուղղությունը: Մեդիակրթության հիմնական նպատակը նոր սերունդին տեղեկատվական նոր

պայմաններում ապրելուն պատրաստելն է: Մեդիակրթությունը սովորեցնում է տեղեկությունը մեկնաբանել և տեղեկություն ստեղծել, հաղորդակցման համար ընտրել իրեն ամենահարմար ու ամենամատչելի միջոցը օգտագործելով ժամանակակից տեխնիկան և տեխնոլոգիան: Ըստ մշակութաբան Բիբլերի՝ կրթված մարդը վերածվում է մշակութակիր մարդու, ում համար կարևոր են ոչ թե պատրաստի գիտելիքները, հմտություններն ու կարողությունները, այլ դրանց հոկման, ձևավորման մշակույթը, գիտելիքը փոխելու ճանապարհների իմացությունը, կարողություններն ու ավելացնելու հմտությունը: Մեդիակրթական գործունեության յուրաքանչյուր տեսակի ընտրությունը կախված է ուսուցչի առջև ծառացած գերակա խնդիրներից, սովորողների պատրաստվածության աստիճանից, նրանց նախասիրություններից, որոնց շարքում իրենց հատուկ տեղն են զբաղեցնում իրացվող մեդիակրթության և մեդիատեղեկատվության ձևերը:

Մեդիակրթությունը դիտարկվում է իբրև մանկավարժական ուղղություն, որը ներառում է զանգվածային հեռահաղորդակցության միջոցների՝ հեռուստատեսության, ռադիոյի, համացանցի, մամուլի, համակարգչային ծրագրերի և տեխնոլոգիաների, կինոյի, շարժանկարի, գովազդի, կրթական, դաստիարակչական, գեղագիտական և հոգեբանական ներգործության օրինաչափությունների ուսումնասիրման ոլորտները:

Մեդիակրթության հիմնական խնդիրներն են՝

- Նախապատրաստել աճող սերնդին, արդի անսահմանափակ և դժվար վերահսկելի տեղեկատվական տարբեր հոսքերի ընկալմանն ու այդ պայմաններում արդյունավետ կենսագործունեության ծավալմանը:
- Ձևավորել տարաբնույթ տեղեկատվությանը համարժեք արձագանքելու մշակույթ:
- Զարգացնել տեխնիկայի միջոցով հաղորդակցական ոչ վերբալ եղանակներով շփման հմտությունը:
- Մշակել տեղեկատվությունը հասկանալու, նրա հնարավոր ու անկանխատեսելի հոգեբանական ներգործությունը գիտակցելու կարողությունը:

Արդի կրթական և դաստիարակչական գործընթացներում մեդիամշակույթի դերն ու նշանակությունը պայմանավորվում է աշակերտի անհատականության զարգացման համար ստեղծվող լայն դաշտով, նրա հույզերի, զգացմունքների արտահայտման, իմացական ակտիվության խթանման, ճանաչողության,

ինքնուրույն, ստեղծագործական մտածողության և գիտական աշխարհայացքի դրսևորման հնարավորություններով:

Սույն դասընթացի առարկան է մեդիակրթության զարգացման փուլերը Հայաստանում և նրա սահմաններից դուրս: Դասընթացի մեթոդաբանական հիմքն են կազմում մշակույթների երկխոսության վերաբերյալ Մ.Բախտինի և Վ. Բիբլերի տեսությունները:

Դասընթացի յուրացման տեսական մեթոդներն են՝ մարդկային քաղաքակրթության զարգացման տարբեր ժամանակահատվածներում մեդիամանկավարժության պատմական զարգացման համեմատական և համադրական վերլուծությունը, ինչպես նաև տպագիր և տեսաձայնային գիտական գրականության ուսումնասիրումը:

Գործնական մեթոդներն են՝ գրական-խաղարկային, դերային-գործունային, պատկերային-շարժանկարային, բեմականացված մեդիակրթական բնույթի իրավիճակների նախագծումը, մեդիաարտադրանքի ստեղծումն ու թողարկումը:

Մեդիամշակույթ ունեցող աշակերտն ավելի գիտակից ու տեղեկացված քաղաքացի է, որն իր որոշումները կայացնում է գիտակցված, որը տեղեկատվական հոսքերից կարողանում է քաղել այն, ինչ իրեն պետք է և օգտակար: Անգլերեն լեզու առարկայի տարբեր թեմաների դասավանդման մեջ 8-րդ դասարանում ներառելով մեդիակրթության տարրեր՝ որոշ ժամանակ անց կունենանք մեդիամշակութային հասարակություն, ինչպես նաև էլ ավելի կաճի հետաքրքրությունը անգլերեն լեզվի նկատմամբ: Մեդիակրթությունը անգլերեն լեզվի առարկայի մեջ ապահովում է նաև չափորոշչային երեք բաղադրիչները՝ գիտելիք, կարողություն և հմտություն, որոնք նպաստում են ոչ միայն մեդիամշակույթային, այլ նաև արժեհամակարգի ձևավորմանը:

Այսինքն՝ անգլերեն լեզվի ուսուցման ժամանակ 8-րդ դասարանի աշակերտները աշխատելով դասագրքային կամ պարզապես ծրագրային տեքստերի կամ տեսանյութերի հետ, ձեռք են բերում նախ՝ գիտելիքի որոշակի պաշար, ապա կարևոր մեդիակարողություններ ու հմտություններ, ինչպիսիք են՝ իմաստավորելը, հակադրելը, համադրելը, դիտարկելը, քննադատաբար վերլուծելը, եզրակացություն անելը: Մեդիամշակույթ ձևավորած աշակերտը

կարողանում է տարբերել առաջնայինը երկրորդայինից և կարողանում է ճիշտ օգտագործել խոսքի ազատությունը և հարգել մյուսների իրավունքները:

Մեդիակրթության տեսության և պատմության ուսումնասիրումն աշակերտներին ընձեռնում է մեդիամշակութային ոլորտի ստեղծագործողությունների օգտագործման միջոցով ուսումնական գործընթացում իրացնել ժամանակակից կրթական փոխներգործուն մեթոդների ու հնարների նորովի կիրառում՝ մշակելով հեռուստատեսության, համացանցի, ֆիլմարտադրության, մամուլի և այլ զանգվածային մեդիաների շրջանակում ստեղծվող առանձին մեդիաարտադրանքի հիման վրա կրթող, ուսուցանող, դաստիարակող, ձևավորող և զարգացնող բնույթի մեդիապարապմունքների իրացման տարաբնույթ տեղնոլոգիաներ: Մեդիակրթական գործունեության յուրաքանչյուր տեսակի ընտրությունը կախված է ուսուցչի առջև ծառացած գերակա խնդիրներից, 8-րդ դասարանի աշակերտների պատրաստվածության աստիճանից, նախասիրություններից և այլ պայմաններից:

Ուստի ժամանակակից անգլերեն լեզվի ուսուցչի համար հրամայական է մեդիագրագիտության ինտեգրումը դասապրոցեսում: Մեդիագրագիտության ինտեգրումը անգլերեն լեզվի 8-րդ դասարանում դասավանդման մեջ հետապնդում է հետևյալ նպատակները՝

- սովորեցնել գնահատել և վերլուծել
- սովորեցնել որտեղ փնտրել և գտնել անհրաժեշտ տեղեկատվությունը
- համեմատել տարբեր մեդիառեսուրսներ
- քննարկել, թե ինչպես է մեդիան խմբագրում, ինչ միջոցներ, հնարքներ են կիրառվում մեդիառեսուրսները ավելի գրավիչ դարձնելու համար
- կարողանալ տարածել ասելիքը մեդիայում պահպանելով էթիկայի կանոնները
- զարգացնել քննադատական և ստեղծագործական մտածողությունը

Ուսուցիչը օգտագործում է հետազոտական մեթոդներ, քննարկումներ, ճանաչողական խաղեր, ինտեգրված դասեր: Աշակերտները մեծ հետքրքրությամբ մասնակցում են տարբեր տեսակի հետազոտական աշխատանքների: Ուսուցիչը յուրաքանչյուր աշակերտին դնում է ակտիվ

մասնակցի դիրքում և հնարավորություն է տալիս իրականացնել անհատական ստեղծագործական գաղափարներ, սովորեցնում է թե ինչպես աշխատել թիմում: Սա հանգեցնում է անգլերեն դասերին համախմբվածության, աշակերտների հաղորդակցման հմտությունների զարգացմանը:

Ուսուցիչը պետք է կարևորի անգլերեն հաղորդակցության, մշակութային, քննական և ստեղծարար մտքի վերջնարդյունքները ըստ իրենց բաղադրիչների: Իհարկե անգլերեն լեզվի ամենակարևոր վերջնարդյունքը 8-րդ դասարնում հաղորդակցությունն է՝ ինչպես անգլերեն լեզուն ուսումնասիրողների այնպես էլ լեզվակիրների հետ:

Մեդիայի միջոցների ինտեգրումը 8-րդ դասարանի անգլերեն լեզվի ուսուցման մեջ չպետք է դիտարկվի որպես պարզապես լրատվամիջոցների օգտագործում՝ որպես առարկա դասավանդելու խթան կամ որպես տվյալ առարկայի ներկայացման օրինակ: Ավելի շուտ այն պետք է տեղեկացվածություն բարձրացնի այն մասին, թե ինչպես են դրանք ազդում աշխարհի մասին աշակերտների պատկերացումների վրա: Աշակերտներին պետք է հնարավորություն տրվի օգտագործել և ընդլայնել իրենց ճանաչողական, զգացմունքային, ստեղծագործական կարողությունները անգլերեն լեզվի միջոցով: Մեդիակրթությունը ներառում է գործունեության երեք ուղղություններ 8-րդ դասարանի դասընթացում՝

1. Մեդիակրթությունը ներառում է տպագիր խոսքը, գրաֆիկա և ձայն, ինչպես նաև շարժուն և անշարժ նկարներ, որոնք տրամադրվում են տեխնոլոգիայի յուրաքանչյուր տեսակի կողմից.
2. Ընդհանուր առմամբ, մեդիակրթությունը պատրաստում է աշակերտներին հասկանալ հաղորդակցման միջոցները և դրանք օգտագործել հաղոդրակցության համար.
3. Մեդիակրթությունը պատրաստում է աշակերտներին գնահատել, ստեղծել տեքստեր, բացահայտել տեքստերի աղբյուրներ, մեկնաբանել նորությունները և արժեքները.

Մեդիա ուսումնասիրությունների ծրագրում դասընթացների մեծ մասը կենտրոնացած է 8-րդ դասարանի աշակերտների անգլերեն լեզվով հաղորդակցման հմտություններ զարգացնելուն օգնելու վրա: Աշակերտները սովորում են կազմակերպել իրենց մտքերը՝ տեղեկառվությունը հակիրճ

ներկայացնելու համար: Մեդիակրթությունը օգնում է աշակերտներին զարգացնել հետազոտական հմտություններ, պատրաստել զեկույցներ կամ ավարտին հասցնել նախագծեր:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ ԵՎ ԸՆԹԱՑՔԸ

Ուսումնական գործընթացում հետաքրքրության խթանումը մեդիամշակույթի միջոցով առանցքային պայման է անգլերեն լեզվի հաջող ուսումնառության համար 8-րդ դասարանում: Իսկ հետաքրքրության խթանումը այն ուսումնական խնդիրներից է, որը միշտ պետք է գտնվի ուսուցչի ուշադրության կենտրոնում: Ներկայումս գոյություն ունեն մի շարք մեթոդներ, որոնք հնարավորություն են տալիս ուսուցիչներին արդյունավետ կերպով ազդեցություն թողնել աշակերտների այս կամ այն ուսումնական որակների և հատկանիշների վրա: Օրինակ ՏՀՏ միջոցների կիրառումը, հարցադրումների մեթոդը, համագործակցության սկզբունքների կիրառումը, բանավեճի մեթոդը և այլն: Տվյալ հետազոտական աշխատանքի շրջանակում

նպատակ է դրել խթանել 8-րդ դասարանի աշակերտների հետաքրքրությունը անգլերեն լեզու առարկայի նկատմամբ կիրառելու ժամանակակից տեխնոլոգիաներ և դասավանդման մեթոդներ: Այս նպատակից ելնելով առաջ են բերվել մի շարք խնդիրներ և գործնական առաջադրանքներ՝

- Պրակտիկ միջավայրում փորձարկել ժամանակակից մեթոդների համագործակցություն՝ ՏՀՏ-ի կիրառումը, հարցաթերթիկի մեթոդը, բանավեճը 8-րդ դասարանի անգլերեն լեզվի դասաժամին:
- Արձանագրել իրականացված դասաժամի առավելությունները և թերությունները:

Աշակերտների անգլերեն լեզվի դասընթացում իմացական հետաքրքրությունները ակտիվացնելու, կարծիքները, համոզմունքները, տեսակետները հայտնելու, հարցապնդումներ անելու, ճշմարտությունը ի հայտ բերելու համար կիրառվում է բանավեճի մեթոդը: Արդյոք բանավեճը 8-րդ դասարանի աշակերտների համար ամենաարդյունավետ գործիքներից մեկն էր թվային և մեդիա կարողունակության զարգացման համար անգլերենի ուսուցման գործընթացում, աշակերտների մեծ մասը համարում էր, որ դա արդիական է:

8-րդ դասարանի աշակերտների 70%-ը բանավեճը համարում են սիրելի, զվարճալի և հետաքրքիր մեթոդ մեդիակրթությունը զարգացնելու համար՝ ասելով.

— Չնայած բանավեճի նախապատրաստական աշխատանքը մի քիչ դժվար է, բայց ես պրպտում եմ համացանցը և հաճույք եմ ստանում:
— Բանավեճի ընթացքում ես տեսնում եմ իմ թերությունները և աշխատում դրանց վրա:

Իսկապես մեդիակրթությունը բանավեճի միջոցով զարգացնում է քննադատական մտածողությունը, անգլերենի հաղորդակցման հմտությունը, հետազոտելու կարողությունը: Այժմ ամենաուսուցանող և զվարճալի մեդիա գործիքը համակարգիչն է, որի միջոցով ուսուցիչը ուղղորդում է աշակերտներին դիտել քննարկված հարցերի հետ կապված տեսանյութեր, ֆիլմեր:

Ֆիլմը դիտելուց հետո 8-րդ դասարանի աշակերտները խմբերով քննարկում էին խնդիրները: Այնուհետև յուրաքանչյուր խումբ վերբեռնում էր իր քննարկման արդյունքները համացանցում: Հետո դասարանում բոլորը

կարողանում էին կիսվել մյուս խմբերի տեսակետներով և ուսուցիչը վարում էր դասարանի քննարկում: Ուսուցիչը խրախուսում էր աշակերներին նախաձեռնողականություն ցուցաբերել հարցեր տալու և պատասխանելու հարցում: Ֆիլմը որպես մեդիագործիք անգլերեն լեզվի ուսուցման գործընթացում նպատակաուղղված է՝

- հաղորդակցական կարողությունների զարգացմանը
- մտքի խթանմանը
- տեսողական, լսողական, տեսական մտածողության զարգացմանը
- թեմայի խորը ընկալմանը
- վարքագծի դրական փոփոխությանը

Անգլերեն լեզվի դասին 8-րդ դասարանում ցուցադրեցի «Թոմ Սոյերի արկածները» (The Adventures of Tom Sawyer) պատմվածքի հիման վրա նկարահանված ֆիլմ, որի նպատակն էր զարգացնել ինքնուրյունության, նախաձեռնության, ստեղծագործական և լեզվամտածողության ունակությունները:

Դասարանը բաժանվեց երեք խմբերի:Առաջին խմբին հանձնարարվեց ներկայացնել ֆիլմի հիմնական գաղափարը::

Երկրորդ խմբին հանձնարարվեց բնութագրել ֆիլմի հերոսներին, վերլուծել նրանց բնավորության հատկությունները և հայտնել իրենց կարծիքները:

Երրորդ խումբը պետք է ներկայացներ հեղինակին (Mark Twen Մարկ Տվեն) և ֆիլմում տեղի ունեցող իրադարձությունների ժամանակաշրջանը:

Բանավեճի, քննարկումների արդյունքում աշակերտները հայտնաբերեցին մարդկային գործողության մի մեծ օրենք՝ մարդը ինչին որ ձգտում է պետք է հասնի աշխատանքով և դժվարությունների միջով:

https://www.youtube.com/watch?v=8xZm2UOam74

Նախքան հետազոտական գործընթացին անցնելը, հետազոտողը առաջ է քաշել այն վարկածը, որ թվային և մեդիակարողունակությունը զգալի առավելություն ունի և ավելի արդյունավետ է ավանդական մեթոդիկաների հետ համեմատած և դրանք նպաստում են 8-րդ դասարանի աշակետների հետաքրքրության խթանմանը անգլերեն լեզու առարկայի հանդեպ:

Հետազոտությունը կատարվել է ուսումնական միջավայրում՝ դասասենյակում:Ուսումնասիրության օբյեկտը հենց այն դասարանն է, որտեղ անցկացվել է հետազոտական դասաժամերը: Հետազոտական աշխատանքի ժամանակ գործածվել է հետևյալ մեթոդները՝

1. հարցաթերթիկի մեթոդը 8-րդ դասարանի շրջանում
2. հարցազրույց 8-րդ դասարանի աշակերտների հետ, ուսուցիչների հետ

Հարցաթերթիկի մեթոդը կիրառել եմ 8-րդ դասարանում, որին մասնակցել են 32 աշակերտ: Հարցաթերթիկի օգնությամբ փորձել եմ պարզել մեդիակրթության դերը անգլերեն լեզվի դասընթացին:

Ինչպե՞ս է օգնում մեդիակրթությունը 8–րդ դասարանի աշակերտներին

1. Արդյո՞ք մեդիակրթությունը արդյունավետ միջոց է անգլերեն լեզվի ուսուցման գործընթացում 8-րդ դասարանում
2. Մեդիակրթությունը արդիակա՞ն է այսօր
3. Ի՞նչ օգուտներ կա մեդիակրթության և մեդիամշակույթի մեջ
4. Արդյո՞ք բանավեճը արդյունվետ մեթոդ է մեդիադասերի ժամանակ

Այն, թե մեդիամշակույթը արդիական է այսօր աշակերտների մեծ մասը պատասխանել է՝ Այո շատ արդունավետ է գրեթե 88%-ը, իսկ մնացած մասը պատասխանել են՝ «Ոչ, արդյունավետ չէ» կամ «Չգիտեմ» տարբերակը: Հետևաբար պարզ դարձավ, որ մեդիակրթությունը շատ արդիական է այսօր: Այն հարցին, թե արդյոք օգուտներ քաղում են մեդիադասերից 68,8%-ը պատասխանել են՝ այո:

Այն հարցին թե ինչ օգուտներ կա, աշակերտների 95%-ը պատասխանել են, որ մատչելի է, հետաքրքիր: Հաջորդ հարցը՝ արդյոք բանավեճի մեթոդը արդյունավետ է մեդիադասերի ժամանակ, աշակերտների 78%-ը պատասխանել են «այո»: Այն հարցը ուսուցիչների հետ՝ արդյոք մեդիակրթությունը արդյունավետ միջոց է անգլերեն լեզվի ուսուցման գործընթացում 8-րդ դասարանում, ուսուցիչների 85,9%-ը պատասխանել են՝ այո, իսկ մնացած մասը պատասխանել են՝ ոչ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հետազոտական աշխատանքը կատարելու ժամանակ բացահայտեցի, որ անգլերեն լեզվի հանդեպ 8-րդ դասարանում հետաքրքրության խթանման համար շատ կարևոր է թվային և մեդիա կարողունակության զարգացումը՝ որպես արդյունավետ միջոց՝անգլերեն լեզվի հաղորդակցման զարգացման գործում: Բացահայտեցի, որ մեդիակրթությունը մանկավարժական շատ կարևոր գիտաճյուղ է և մանկավարժական կարևոր պայմաններից մեկն է: Հետազոտական աշխատանքս իրականացնելու ընթացքում հասկացա, որ մեդիակրթությունը արդյունավետ միջոց է անգլերեն լեզվի ուսուցման պրոցեսում 8-րդ դասարանում: Գիտամեթոդական համապատասխան գրականության ուսումնասիրության, ինչպես նաև կատարված հետազոտական աշխատանքի արդյունքում եզրակացրեցի, որ մեդիակրթության դերը շատ կարևոր է թե ուսուցիչների և թե աշակերտների շրջանում:

Մեդիակրթության նպատակը անգլերեն լեզվի դասապրոցեսում 8-րդ դասարանում մեդիակրթական տեխնոլոգիաների կիրառման արդյունավետության վերլուծումն ու հիմնավորումն է: Մեդիամշակույթ ունեցող աշակերտը ավելի գիտակից ու տեղեկացված քաղաքացի կլինի, որն իր որոշումները գիտակցված կկայացնի: Մեդիամշակույթի դերն ու նշանակությունը պայմանավորված են աշակերտի անհատականության զարգացման համար լայն դաշտով նրա հույզերն ու զգացմունքները արտահայտելու, ստեղծագործական մտածողության և անգլերեն լեզվի հաղորդակցական հմտությունների դրսևորման համար ստեղծվող լայն հնարավորություններով:

Հետազոտական աշխատանքը իրականացնելու համար գործածվել է տարբեր մեթոդներ՝ բանավեճ, հարցաթերթիկի մեթոդը, հարցազրույց է իրականացվել աշակերտների, ուսուցիչների հետ: Հետազոտության ժամանակ բացահայտեցի և համոզվեցի, որ թվային և մեդիակարողականության զարգացումը արդյունավետ, արժեքավոր և իմաստալից միջոց է 8-րդ դասարանի անգլերեն լեզվի ուսուցման գործընթացում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Մանուկյան Ա. Մ., Մուրադյան Հ. Ս. Մեդիակրթություն /ուսումնամեթոդական ձեռնարկ/ «Զանգակ» հրատ. Երևան 2017թ. 272 էջ

2. Андреева И. В. Киноматографическое решение как средство еффективности учебного фильма, Изд-во ВГИК, 2008 с 60-73
3. https/www.e-draft/projects/2560/about
4. https/www.prodigygame.com/main/rn/blog/teaching media literacy

ՀԱՎԵԼՎԱԾ 1

Ամիս ամսաթիվ — 12.09.-23.09.

Առարկան, դասարանը — Անգլերեն 8

Դասի թեման — Sights of London (Լոնդոնի տեսարժան վայրերը)

Դասի նպատակը — 1 Հարստացնել բառապաշարը

2 Զարգացնել ճանաչողական և մտածողական, քննարկման, բանավեճի ունակությունները

Դասի ընթացքը

<u>Խթանման փուլ</u> — հարց՝ What sights of London do you know? What sights of London would you like to visit? Why?

Իմաստի ընկալման փուլ — ցուցադրել Լոնդոնի տեսարժան վայրերի սահիկաշարք: Կարդալ և ճիշտ արտասանել սահիկաշարքում գտնվող յուրաքանչյուրն բառ և նախադասություն:

Կազմել խմբեր — մի խումբը ցույց է տալիս Լոնդոնի տեսարժան վայրերից մեկի նկարը, մյուսները պետք է ներկայացնեն այդ վայրը՝ գործածելով տվյալ նյութի բառապաշարը:

Քննարկել-բանավիճել — խմբերը քննարկում, բանավիճում են և ներկայացնում իրենց իսկ կողմից պատրաստված նյութը՝ Լոնդոնի տեսարժան վայրերի նկարներով:

Խաղ — Who will remember more? — Հիշել դասապրոցեսում ստացած ինֆորմացիան

Գնահատում և տնային աշխատանք — պատրաստել սահիկաշարք՝ Sights of Yerevan (Երևանի տեսարժան վայրերը) և համեմատել Լոնդոնի և Երևանի մշակույթը Venn Diagram-ի օգնությամբ:

ՀԱՎԵԼՎԱԾ 2

Աշակերտների անկետավորման հարցաթերթիկ

1. Արդյո՞ք մեդիակրթությունը արդյունավետ միջոց է անգլերեն լեզվի ուսուցման գործընթացում 8-րդ դասարանում:
2. Մեդիակրթությունը արդիակա՞ն է այսօր:
3. Ի՞նչ օգուտներ կա մեդիակրթության և մեդիամշակույթի մեջ:
4. Արդյո՞ք բանավեճը արդյունավետ միջոց է մեդիադասերի ժամանակ: